

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011 թ ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ միջև 22.02.2011թ. կնքված N 09060129-1 պետական աջակցության պայմանագրի միջոցառումների՝ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից իրականացվել են.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1. «ՄԿՈՒ մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական կարողութենամետ չափորոշիչների և գնահատման չափանիշների մշակում»:

- Մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի կողմից 01.10.2011 թ. հաստատվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական 20 պետական կրթական չափորոշիչները (հիմք՝ N N 1117-Ա/Ք, 1118-Ա/Ք, 1119-Ա/Ք, 1120-Ա/Ք, 1121-Ա/Ք, 1122-Ա/Ք, 1123-Ա/Ք, 1124-Ա/Ք, 1125-Ա/Ք, 1126-Ա/Ք, 1127-Ա/Ք, 1129-Ա/Ք, 1130-Ա/Ք, 1128-Ա/Ք, 1186-Ա/Ք, 1187-Ա/Ք, 1188-Ա/Ք 1189-Ա/Ք, 1238-Ա/Ք, 1239-Ա/Ք): Մշակվել և հաստատվել է ծրագրի իրականացման փաթեթը՝ տեխնիկական առաջադրանքը, պայմանագիրը, հաշվետվության ձևը և ընդունման-հանձնման ակտը (այսուհետ՝ տեխնիկական փաթեթ): Մշակված 20 պետական կրթական չափորոշիչները տեղադրված են www.mkuzak.am պաշտոնական կայքում:
- 2010 թ. մշակված և հաստատված 19 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները 2011/2012 ուսումնական տարվանից փորձարկման նպատակով ներդրվել են մի քանի ուսումնական հաստատություններ, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 14.12.2010 թ. N 1693-Ա/Ք հրամանով: Մշակված և հաստատված չափորոշիչները, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ ներդրվել են 19 չափորոշիչները, տեղադրված են www.mkuzak.am կայքում:

- Վերանայվել են մասնագիտական 3 ոլորտների՝ «Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն», «Շինարարություն և ճարտարապետություն», «Զբոսաշրջություն և սպասարկում» համար մշակված չափորոշիչների փաթեթները: Վերանայման ենթակա ոլորտների վերաբերյալ առաջարկությունը ստացվել է ԿԳՆ-ից, իսկ աշխատանքային խմբերի կազմը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 15.07.2011 թվականի թիվ 816-Ա/Ք հրամանով: Միջոցառման իրականացման համար սահմանված վերջնաժամկետը ՀՀ ԿԳՆ համաձայնությամբ երկարաձգվել է մինչև դեկտեմբեր 30-ը (տես՝ թիվ 17(54649)-11, 24.11.11թ):

Մասնագիտական 3 ոլորտներում ընդգրկված պետական կրթական չափորոշիչների փաթեթները ՄԿՈՒԶԱԿ-ի և ոլորտային հանձնաժողովների կողմից ենթարկվել են տեխնիկական և բովանդակային փորձաքննության, որոնց արդյունքում նախագծերը ենթարկվել են լրամշակման (կից ներկայացվում է վերանայված չափորոշիչների ցանկը և նախագծերի փաթեթի էլեկտրոնային տարբերակը):

Առաջադրված 3 ոլորտների առկա մասնագիտությունների և որակավորումների համար մշակված պետական կրթական չափորոշիչների վերանայման արդյունքում բոլոր մասնագիտական դասիչների համար սահմանվել են հստակ խնդիրներ, մասնագիտության, որակավորման բնութագրերը համապատասխանեցվել են աշխատաշուկայի պահանջներին, առաջարկություններ են ներկայացվել մասնագիտությունների և որակավորումների անվանումները փոփոխելու վերաբերյալ:

ՄԻԶՈՑԱՌՈՒՄ 2. «ՄԿՈՒ կարողութենամետ չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի մշակում»

- Մշակվել են 25 մասնագիտությունների և որակավորումների համար կարողութենամետ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր: Դրանցից 5-ը մշակվել են ապրիլ, իսկ 20-ը՝ նոյեմբեր ամսվա ընթացքում: Մշակվել և հաստատվել է ծրագրի տեխնիկական փաթեթը:

Մշակված և հաստատված ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը տեղադրված են www.mkuzak.am կայքի համապատասխան բաժնում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3. «Վերապատրաստման դասընթացների կազմակերպում»

Մշակվել և հաստատվել է ծրագրի տեխնիկական փաթեթը: Կազմակերպվել և անց են կացվել հետևյալ վերապատրաստման դասընթացները.

- 158 ՄԿՈՒ տնօրենների և տնօրենների տեղակալների, մեթոդիստների դասընթացներ՝ 10 խմբերի միջոցով: Նախապես պլանավորված և ճշգրտված ցուցակների հիման վրա հայտագրված 210 անձանցից դասընթացներին փաստացի մասնակցել են 158-ը: Ծրագիրն ամբողջությամբ իրականացվել է թերկումպլեկտավորված խմբերով:

ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստում 2 փուլով: Առաջին փուլի ընթացքում վերապատրաստվել են 84 ուսումնական հաստատության 1028 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ՝ նախատեսված 1000-ի փոխարեն, իսկ երկրորդ փուլում, որը համատեղվել է մասնագիտական չափորոշիչների, մոդուլային ուսումնական ծրագրերի և պլանների ներդրման գործընթացի մշտադիտարկման և խորհրդատվության միջոցով՝ 1125 մասնակից:

- պետական կրթական չափորոշիչների նախագծեր մշակող 54 փորձագետների դասընթացներ՝ նախատեսված 30-ի փոխարեն,
- ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր մշակող 30 փորձագետների դասընթաց,
- 12 տարածաշրջանային քոլեջների կառավարման խորհուրդների 128 անդամների վերապատրաստում (նախատեսված 100-ի փոխարեն), այդ թվում՝ 1-օրյա վերապատրաստում՝ 6 տարածաշրջանային քոլեջների համար,
- ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների 20 վերապատրաստողների (մոնիտորինգ և խորհրդատվություն իրականացնող) դասընթաց (8 ժամ տևողությամբ). իրականացվել է ըստ անհրաժեշտության, ֆինանսական միջոցներ չեն ներդրվել,
- ՄԿՈՒ ոլորտում քաղաքականություն մշակող 30 անձանց դասընթաց (փոխուսուցման եղանակով)՝ 3 փուլով:

Միջոցառումների կատարման հիմքը՝ առկա մատենավարությունները և դասավանդողների հաշվետվությունները:

ՄԻԶՈՑԱՌՈՒՄ 4. «ՄԿՈՒ քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող հետազոտական նախագծերի իրականացում, իրավական ակտերի նախագծերի մշակում»

ՀՀ ԿԳ նախարարության հետ համաձայնության արդյունքում «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ» ծրագրի շրջանակում իրականացվել է ՄԿՈՒ ռազմավարության և քաղաքականության վերաբերյալ 7 հետազոտական աշխատանքների փաթեթ՝ հետևյալ ուղղություններով.

- ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ տարածաշրջանային քոլեջների, կանոնադրական հիմքերի և իրավահարաբերությունների ուսումնասիրությունը բարեփոխումների համատեքստում.
- ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման, կրթական ծրագրին մասնակցության մուտքի և դրանից դուրս գալու հարաբերությունների ուսումնասիրությունը բարեփոխումների համատեքստում.
- ՄԿՈՒ համակարգի ֆինանսավորման մեխանիզմների օպտիմալացման և ծախսարդյունավետության հիմքերի ստեղծման նախադրալները՝ բարեփոխումների համատեքստում.
- նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ուսուցման ծրագրերի մշակման և ներդրման, ոլորտային հանձնաժողովների գործունեության կանոնակարգման հարաբերությունների ուսումնասիրությունը՝ բարեփոխումների համատեքստում.
- ՄԿՈՒ բարեփոխումների ռազմավարության և հայեցակարգային հիմքերի ուսումնասիրություն, նոր ուղղությունների առաջադրում.

- մասնագիտական կրթական չափորոշիչների, կրթական ծրագրերի լիցենզավորման, մասնագիտությունների և որակավորումների ցանկի ուսումնասիրությունը՝ որակավորումների ազգային շրջանակի ներդրման համատեքստում
- ՄԿՈՒ մանկավարժական և վարչական աշխատողների մասնագիտական կարիքների ուսումնասիրություն՝ առկա վիճակի և բարեփոխումների պահանջներին համապատասխան:

Իրականացված հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են և դրանց հիման վրա մշակվել են իրավական ակտեր նախագծերի փաթեթ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5. «ՄԿՈՒ Բարեփոխումների արդյունքների գնահատում»

ՄԿՈՒ բարեփոխումների արդյունավետությունը դիտարկելու նպատակով դեկտեմբեր ամսվա ընթացքում փորձագետների միջոցով անցկացվել է «ՄԿՈՒ բարեփոխումների արդյունքների գնահատում»: Այն իրականացվել է 5 ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում (Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ, Երևանի թիվ 1 ուսումնարան, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ և Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ) յուրաքանչյուրում 36 ժամ տևողությամբ: Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունն ավարտվել է: Ներկայացվել են առաջարկներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6. «ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների ազգային բազայի համալրում»

ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների ազգային բազայի համալրումը տեխնիկական պատճառներով չի իրականացվել, քանի որ մշակված բազային ծրագրի կառուցվածքը և փաստաթղթերի տեխնիկական պայմանների մեջ առկա էին չհամընկնումներ: Հետևաբար ազգային բազայի համալրումը կկատարվի տեխնիկական խնդիրները կարգավորելուց հետո:

Սակայն ՄԿՈԻ մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները և մոդուլային ծրագրերը տեղադրվել են mkuzak.am պաշտոնական կայքում:

ՄԻԶՈՑԱՌՈՒՄ 7. «ՄԿՈԻ համակարգի համար ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի մշակում և հրատարակում»

2011թ. մշակվել են և հանձնվել են հրատարակման հետևյալ ուսումնա-մեթոդական ձեռնարկները և ուսումնաօժանդակ գրականությունը.

- Հագուստի մոդելավորում և վերջնարդյունքի ստացում
- Հյուսնական, ատաղձագործական աշխատանքներ
- Զբոսաշրջային արդյունքի ձևավորումը Հայաստանում
- Բնական այրվող գազեր
- Միջպետական ավտոմոբիլային փոխադրումներ: Լոգիստիկա
- Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կազմակերպում և ավտոմոբիլների տեխնիկական վիճակի գնահատման ցուցանիշները
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Գործավարություն և փաստաթղթավարություն
- Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն
- Սոցիալական գործընկերությունը կրթության զարգացման նախապայման. առաջավոր երկրների օրինակներ

Ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկները գտնվում են տպագրման փուլում:

ՄԻԶՈՑԱՌՈՒՄ 8. «Հայաստանի ՄԿՈԻ համակարգի վերաբերյալ տեղեկատվական նյութերի հավաքում, մշակում և տարածում»

2011 թ. իրականացվել են հետևյալ գործողությունները.

- պարբերաբար համալրվել է ՄԿՈԻԶԱԿԻ կայքէջը՝ www.mkuzak.am,
- պատրաստվել են ինտերնետ բաներներ և տեղադրվել 3 տեղեկատվական կայքերում,
- պատրաստվել և մամուլում հրապարակվել են 3 հոդվածներ,

- պատրաստվել և եթեր են հեռարձակվել 5 ռեպորտաժներ,
- պատրաստվել և եթեր են հեռարձակվել 2 սոցիալական հոլովակներ,
- պատրաստվել և եթեր է հեռարձակվել ՄԿՈԻ համակարգի վերաբերյալ տեղեկատվական ֆիլմ
- կազմակերպվել է մասնագիտական կարողությունների ցուցադրություն օլիմպիադա,
- կազմակերպվել է մասնագետների աջակցության արշավ:
- կազմվել և հրատարակվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» տեղեկատվական, մեթոդական և վերլուծական հանդեսի 3-4.2011 թողարկումը

Տեղեկատվական միջոցառումների արդյունքները պարբերաբար տեղադրվում են www.mkuzak.am կայքում:

ՄԻՋՈՑԱՆՈՒՄԳ. «ՄԿՈԻ վերաբերյալ եվրոպական և այլ երկրների փաստաթղթերի կամ խորհրդատվական նյութերի թարգմանություն»

Իրականացվել է 500 էջ եվրոպական և այլ երկրների ՄԿՈԻ վերաբերյալ հետևյալ նյութերի թարգմանություն:

	Նյութի անվանումը	Նյութի հայերեն անվանումը	Էջերի քանակը (1 էջը = 1800 նիշ)
1	Apprenticeship: Modern Training with a Future	Աշկերտություն. Հեռանկարային ժամանակակից ուսուցում	50
2	Lifelong Learning Programme 2011-2013	Ցկյանս ուսումնառության ծրագիր 2011-2013	61
3	Success stories on workplace learning in Europe	Աշխատանքի վայրում ուսուցման հաջողված փորձի օրինակներ Եվրոպայում	119
4	European Centre for the Development of Vocational Training RESEARCH PAPER No 17	CEDEFOP-ի հետազոտական աշխատանք N 17	115
5	European Centre for the Development of Vocational Training	CEDEFOP-ի հետազոտական աշխատանք N 11	93

	RESEARCH PAPER No 11		
6	The Bruges Communiqué on enhanced European Cooperation in Vocational Education and Training for the period 2011-2020	Բրուգեի պաշտոնական հաղորդագրությունը հիմնված Եվրոպական համագործակցության Մասնագիտական կրթության և ուսուցման վրա 2011-2020 ժամանակահատվածի համար	21
7	Quality Management in Vocational Education and Training	Որակի կառավարումը մասնագիտական կրթության և ուսուցման մեջ	41

Թարգմանված նյութերի փաթեթը տեղադրված է mkuzak.am կայքում: